

ՇՆԱԳԼՈՒԽ ՊԱՐԿԱՆՈՐ


Առաջիկայ պատկերս՝ զոր կը ներկայացընենք մեր ընթերցողաց՝ է այն կենդանիներէն մին, զորս հազիւ երբեք տեսած են եւրոպական նոյն իսկ ամենամեծ քաղաքաց կենդանաբանական պարտէզքն. և ծանօթացաւ ուսումնական աշխարհի՛ այս յետին քանի մի ամաց շրջանին մէջ, երբ տեսնուեցաւ առաջին անգամ ողջ՝ փարիզու աշխարհածանօթ կենդանաբանական պարտիզին մէջ, և զոր ուսումնականք կոչեցին *Thylacine cynocéphale* (Շնագլուխ պարկաւոր) անուամբ. վասնզի իւր ցուկին ձևովն կը նմանի շան, և իւր որովայնին վրայ պարկ մ'ունի, ուր ըստ օրինակի այլոց պարկաւոր կենդանեաց՝ Ագեվագի (*Kangourou*) և Պարկերէի (*Sarigue*), և այլն՝ կը կրէ իւր ձագերը մինչ մայրական խնամոց դեռ պէտք ունին:

Շնագլուխ պարկաւորն իւր ցեղին մէջ ամենէն աւելի կատաղին և վայրենաբոյնն է, և նոյն իսկ երկիւղալի մարդկանց համար. իւր մի միակ բնակավայրն է Աւստրալիոյ վան Ռիէմէն գաւառն, ուր ժամանակաւ այնչափ բազմացած և յանդուգն էին, որ նոյն իսկ հովուաց արթնութեան ժամանակ և աչաց իսկ ներքն՝ կը տասանորդէին հօտերը, ինչպէս կ'ընէին ժամանակաւ գայլերն Անգղիոյ մէջ. Սակայն այժմ՝ յԱւստրալիա գաղթականութեանց բազմանորովն և շնորհիւ եւրոպական հրազինուց զօրութեան՝ անոր յափշտակիչ և աւերիչ ազդեցութիւնքն կը նուազին, և թողլով գաշտավայրերը և բնակութեանց մերձակայ տեղերը՝ կը քաշուի բարձրագոյն լեռանց գագաթունքը, ծովու երեսէն 1000—1500 մետր բարձր, ուր դրեթէ երկրիս երեսն միտապատ ձեամբք ծածկուած է:

Ինչպէս կը տեսնուի յայտնապէս ի պատկերի, Շնագլուխ պարկաւորին գլխոյն յօրինուածն նման է շան գլխոյն և աւելի ճիշտ գայլուն՝ իւր կոնաձևութեամբն, ականջաց դրիւքն, ենկայնաձև և ծայրատ ցուկովն. իւր ատամանց կարգաւորութիւնը ահաւոր է, ծասքողականքն բազմաթիւ են, շնատամուռքն սուր և աղօղիքն հատու և իրարմէ անհաւասար մեծութեամբ: Մարմինն երկայն է և կարճաւորունք, տուտն՝ չերտաւոր և աւելի բրդալից քան զմարմինն, և զունդ վրն ևս կը տարբերի ի մարմնոյն, որ է մթնագոյն դորը՝ ունենալով աստ անդ ցիւրեցան դեղին կէտեր, որք որովայնին վրայ երթալով կ'սպիտականան. իսկ կռնակին երկու կողից վրայ կան 14 զուգահեռական գծեր նման վագերաձիոյն (*zèbre*), որոյ նմանութեան պատճառաւ կոչեցին իտալացիք այս կենդանիս՝ Պարկերէ վագերաձի (*Sariga Zebra*). Իսկ պոչին գոյնը՝ ուր մազերն խիտ, կարճ և կարծր են, վերին երեսն մթնագոյն է, ներքինն՝ աւելի բաց, ծայրն՝ գրեթէ սեւաւ: Գլուխն տժգոյն, աչաց ներքին անկիւններն սեւազայն, որոց միջակետէն կը ձգի սպիտակ գիծ մը ըստ բաւականի լայն որ կ'եր-

Թայ մինչև ցուկին վրայ, որոյ անմիջապէս ծայրը՝ քթին վրայ սև կէտ մը կայ, վերին շրթանց վրայ կատուի ու շան նման ունի երկայն ընչացքներ և քանի մը երկնցած մազեր, որք անկանոն կերպով ցրուած են ծնօտից վրայ. իսկ աչքերն են մեծ, կորիզանման և բրբերն շագանակագոյն :

Ի լրումն նկարագրութեանցս պէտք է աւելցնել, որ իրեն՝ որովայնին վրայ ունեցած պարկն անհամեմատ փոքր է քան զայլ կենդանեաց, և այն ոսկերքն՝ որոց վրայ հաստատուած է պարկն՝ հազու նշմարելի են. ուստի պէտք չէ վարմանալ որ առաջին գաղթականք երբ այս կենդանին տեսան յԱսորայի ա՛ գայլ կարծեցին, թող որ հասա.



Շնագոռնի Պարկառոր

կին բարձրութիւնն իսկ գայլուն հաւասար է. աստի ելան այնչափ զանազան անուանք որ տրուեցան այս կենդանոյս, ինչպէս են գայլ, բորենի, վագերաձի և այլն :

Այժմ շնագոռնի պարկաւորին գլխաւոր որսերն են ագնվաղ, պարկերէ, և ուրիշ փոքր կենդանիներ. կը բռնէ նմանապէս և զեզիանէ հանդերձ իւր ողնիքանման փուշերով, որով դժուար է այլ անասնոց նոյն իսկ մարդկանց զայն բռնել և կը հաւաստի ի նախնի բնակչաց Ասորայիոյ, թէ երբ այս կենդանիք դեռ չէին քաշուած լերանց գագաթունքը և կը յաճախէին դաշտավայրերը; կը սնանէին առաւելապէս փոկերու, ձկանց և փափկամորթից դիակներով, որք ծովուն ալեաց բաւուած են ի ցամաք կը ձգուէին: Այլ առաջին եւրոպական գաղ-

Թականութիւնը որ անդ հաստատուեցաւ, այս կենդանեաց աւելի համեղ և բուժանելի պատառ մը յօրինեց իւր նոր բերած ոչխարաց և արջառոց նախիրներովն և ընտանի հաւուց տեսակներովն. այնպէս որ այս պարկաւորք կրցան իրենց արիննազանգ ախորժակը լիապէս յագեցընել, առնելով իրենց օգնութիւն նաև զիշերային լուութիւնը, որով իրենց աւազակութիւնը կրնային աւելի ազատաբար գործել, և մտնելով զիւրութեամբ ոչխարաց փարախին մէջ յափշտակել զկենդանիս և նաև յանդգնիլ մինչև անգամ մտնել տանց գաւիթներուն մէջ յափշտակելու զհաւս և զվառեակս։ Այս ահաւոր թշնամուցն զէմն առնելու համար պահապանք կրկնապատկեցին իրենց արթնութիւնը և զօրութիւնը, մինչև որ կրցան բոլորովին իրենցմէ հեռացընել զասոնք։ Եւ այս բանս ի գլուխ տարին առաւելապէս որոգայթ լարելով անոնց, քան թէ շանց ձեռքով. վասնզի թէպէտ և ասոնք չեն համարձակիր ինքիւրենցմէ մարդկանց վրայ յարձկիլ, սակայն շանց վրայ աներկիւղաբար կը խոյանան, կամ զանոնք կը յափշտակեն կը տանին, և կամ վիրալից և կիսամահ կը թողուն կը հեռանան։

Մինչև ցարդ գեռ ոչ ոք կրցաւ սակաւիկ ինչ ընտանեցընել այս կենդանիս ոչ ի Գաղղիա և ոչ յԱնգղիա։ Անոնք որ Յ տարիէ ի վեր կը գտնուին փարիզու կենդանաբանական պարտիզին մէջ, կը թուին հակամիտած լինել իրենց գերութեան վիճակին և կորանցուցած են իրենց բնիկ վայրագութիւնը, պահելով միայն այս՝ որ օրուան մեծագոյն մասնը կ'անցընեն իրենց որջին մէջ առանձնութեամբ։

ԱՐՈՒԵՍ ՊԱՆՈՒՅՈՒՆ ՈՒՏԵԼԵՍՅ



Գլխաւոր սկզբունքներն, որոց վրայ հիմնեալ են պահպանութեան դրութիւնքն՝ առ հասարակ ամենայն սենդարաբ գոյացութեանց։

Մենդարար գոյացութեան մի սր և է մասն որ դադրած է 'ի կենաց, եթէ ենթարկուի արտաքին ազդեցութեանց՝ կը սկսի իսկոյն տարբարաշխիլ։ Չինքը կազմող պարզ մարմիններն, թթուածին, յրածին, ածխածին և բորակածին, յիրերաց կը բաժնուին, կը կազմեն բաղկացութիւնք, և առաջին բաղադրութիւնը կը սկսի աստիճանաբար եղծանիլ։

Կ'ըսենք թէ սր և է գոյացութիւն որ դադրած է 'ի կենաց. վասն զի սերմանք, քանի մի պտուղք, և նոյն իսկ կոճղէղք, բնաւ չեն խանգարի՞ր իրենք իրենց ձգուելով. վասն զի իրենց մէջ բովանդաւոր